

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԼԵՎՈՆ ԺԻՐԱՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՈԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԼԵԶՎԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ. Կ. Եզեկյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ. Մ. Խաչատրյան**

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Պ. Հայրապետյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. մարտի 21-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. փետրվարի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու՝

Ն. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բանակը յուրաքանչյուր ժողովրդի համար կարևորագույն օղակ է, նրա գոյատևման հիմնական երաշխավորներից մեկը: Պետությունը չունեցող ազգերը չունեն նաև կանոնավոր բանակ, և բանակի բացակայության հանգամանքը բնականաբար դանդաղեցնում է պատմական տվյալ փուլում ռազմական ոլորտի լեզվի զարգացման գործընթացը: Թերևս հայոց պետականության 700-ամյա բացակայությունն է պատճառը, որ ռազմական լեզվագիտությունը, զինվորական ոլորտի լեզվի ուսումնասիրությունը, ընդհանրապես ռազմական ոլորտի լեզուն զարգացում չեն ապրել, և, չնայած ռազմական ոլորտի լեզվի քննության տեսական ու գործնական կարևոր նշանակությամբ, այդ թեմայով ծավալուն աշխատություններ հայագիտության մեջ չկան. հրատարակվել են միայն մի քանի ռազմական բառարաններ: Սրանով պայմանավորված՝ քննության նյութ ենք դարձրել ռազմական ոլորտի լեզվի առանձնահատկությունները հայերենում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Մեր նպատակն է համակարգված և հնարավորինս ամբողջական ներկայացնել ռազմական ոլորտի լեզվի առանձնահատկությունները՝ կատարելով բառապաշարային և քերականական իրողությունների քննություն:

Ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

ա) Ուսումնասիրել ռազմական ոլորտի լեզուն, դրա զարգացման օրինաչափությունները տարբեր ժամանակաշրջաններում:

բ) Ներկայացնել ռազմական ոլորտի թե՛ համագործածական և թե՛ ոչ գործուն բառաշերտերը՝ անդրադառնալով հնաբանություններին, փոխառություններին, նորաբանություններին, հարանուններին ու համանուններին, վերլուծել ռազմական ոլորտի բառապաշարը ըստ կազմության՝ որոշելով ռազմագիտական տերմինների ստեղծման առավել գործուն կաղապարները:

գ) Ուսումնասիրել ձևաբանական ու շարահյուսական այն իրողությունները, որոնք ռազմական ոլորտի լեզվում, զինվորական հաղորդակցություններում խոսքի ձևավորման, պատկերավորման ու արտահայտչական առումներով մեծ դեր են կատարում:

դ) Վեր հանել լեզվաոճական այն առանձնահատկությունները, որոնցով բնորոշվում է ռազմական ոլորտի լեզուն:

Գիտական նորույթը: Աշխատանքը հայագիտության մեջ առաջին փորձն է՝ նվիրված ռազմական ոլորտի լեզվի բառապաշարի ու քերականական իրողությունների վերլուծությանը: Կարծում ենք՝ և՛ թեմայի բնույթով, և՛ քննվող հարցերի համակարգով, և՛ քննության հիմնական արդյունքով աշխատանքը կարելի է համարել նորություն:

Դետազոտության նյութը: Ռազմական ոլորտի լեզուն խիստ բազմազան է և լայնաշերտ, ուստի չենք բավարարվել միայն զինվորական կանոնադրությունների,

մասնագիտական ձեռնարկների ուսումնասիրմամբ: Որպես նյութ են ծառայել նաև տարբեր տարիներին ստորագրված զինվորական հրամանները, ծառայողական փաստաթղթերը, զեկուցագրերը, ծառայողական քննության նյութերը: Հատուկ քննության առարկա է զինվորական ոլորտի բանավոր խոսքը, ուստի ՁՈՒ տարբեր զորամասեր, ստորաբաժանումներ այցերի ժամանակ ուսումնասիրել ենք զինվորական բանավոր հաղորդակցությունների լեզվական իրողությունները:

Ուսումնասիրության մեթոդը: Այն պայմանավորված է ուսումնասիրվող նյութի խնդիրներով և նպատակով: Ռազմական ոլորտի լեզվի առանձնահատկություններն ուսումնասիրելիս կիրառել ենք համատեքստային և լեզվաբանական վերլուծության, տարածամասակյա և համաժամանակյա մեթոդները՝ անհրաժեշտության դեպքում դրանք համադրելով:

Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը: Հետազոտության արդյունքները նախադրյալներ են ստեղծում բարելավելու ռազմական ոլորտի լեզվի զարգացման գործընթացը, ստեղծելու միասնական համակարգ՝ թարգմանությունների ու տերմինաշինության ժամանակ միևնույն մոտեցումներով առաջնորդելու համար: Ատենախոսությունը բավականին շահեկան է ռազմագիտական տերմինների ճշգրտման առումով. ոչ միայն ներկայացվել են առկա ձևերը, այլև առաջարկվել են դրանց առավել ճիշտ, նպատակահարմար տարբերակները: Ուսումնասիրվել են ոլորտում առավել հաճախ հանդիպող բառազործածության ու թարգմանական սխալները, ներկայացվել դրանց ճիշտ ձևերը: Աշխատանքը կարող է օգտակար լինել նաև ռազմական ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստման համար, բացի այդ՝ բազմաթիվ դրույթներ կարող են հետաքրքրել զինվորական ոլորտում աշխատող մասնագետներին:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ունեն իրենց ենթագլուխները, եզրակացություններից և գրականության ցանկից (տեսական գրականություն, բառարաններ, ռազմական ոլորտի մասնագիտական գրականություն): Աշխատանքի ծավալը մեքենագիր 143 էջ է:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Աշխատանքի վերաբերյալ կան հրապարակումներ, որոնց ցուցակը ներկայացվում է սեղմագրի վերջում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը: Ներածության մեջ ներկայացված են ռազմական ոլորտի լեզվի զարգացման օրինաչափությունները տարբեր ժամանակաշրջաններում, ամփոփ անդրադարձ է կատարվել մինչ այժմ կատարված աշխատանքներին, մասնավորապես ռազմագիտական մի շարք բառարաններին: Հիմնավորվել են ուսումնասիրվող թեմայի կարևորությունն ու արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակն ու խնդիրները:

Առաջին գլուխը վերնագրված է «Ռազմական ոլորտի բառապաշարը»: Նախ քննվել են բառապաշարի շերտերը՝ նորաբանությունները, հնաբանությունները, փոխառությունները, օտարաբանությունները, բառապատճենումները, համանունները, հարանունները, ներկայացվել են առավել հաճախ հանդիպող բառագործածության ու թարգմանական սխալները: Այնուհետև կատարվել է բառապաշարի քննություն՝ ըստ կազմության՝ առանձնացնելով բառակազմական առավել գործուն կաղապարները, անդրադարձել է կատարվել նաև հապավումներին:

Խորհրդային Միության փլուզումից և ազգային բանակի ստեղծումից հետո կարևորագույն խնդիր դարձավ ռազմագիտական բառապաշարի՝ իբրև նոր, ինքնուրույն համակարգի թարգմանությունն ու հայացումը: Սկսվեց բառաստեղծման բուռն գործընթաց, որը ծնունդ տվեց բազմաթիվ **նորաբանությունների**, որոնք միանգամից մտան մեր լեզվի բառապաշար, ինչպես՝ *զորէջք, խրամաբջիջ, խրամախորշ, հրետաթումբ, հրթիռակիր, մենահատ, պայթակայուն, ցատկերթ, օդուժ* և այլն: Գործընթացը բավականին բարդ է և շարունակվում է մինչ օրս: Այսօր էլ ռազմական ոլորտի լեզվում գործածական են մնում ռազմագիտական շատ հասկացություններ արտահայտող օտարահունչ բառեր. սպայակազմը, որի մի զգալի մասը սովորում ու պատրաստվում է արտասահմանում, մեծ մասամբ՝ ՌԴ-ում, չի կարողանում միանգամից լուծել ծառայած լեզվական խնդիրները՝ հընթացս հայերենի փոխելով արդեն ձևավորված բառապաշարը: Ռազմական ոլորտի լեզվի նորաբանությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ բառային (բուն) և իմաստային, քանի որ անհատի կողմից ստեղծված բառեր, որոնք հետագայում սկսել են կիրառվել, այս դեպքում չկան: Ռազմական ոլորտում բուն նորաբանությունների առաջացումը պայմանավորված է երկու հանգամանքով: Առաջին՝ նոր հասկացությունների ու զինատեսակների ի հայտ գալով, օրինակ՝ ստեղծվեց գնդացի, հորինվեց *ակամորսիչ* ինժեներական սարքը, և անհրաժեշտաբար լեզվում ստեղծվեցին նաև դրանք արտահայտող բառեր: Այսօր այդպիսի նորաբանությունների թվում են այնպիսի ռազմագիտական տերմիններ, ինչպիսիք են՝ *զազանետ, զրահափոխարդիչ, ծխաբողարկում, կամրջադիր, հետախուզադետրային (մեքենա), հրանետ, հրթիռակիր, սուզասարք, ուղղաթիռակիր, օդալուսանկար* և այլն: Բուն նորաբանությունների երկրորդ խմբի մեջ մտնում են այն ռազմական տերմինները, որոնք ստեղծվել են արդեն առկա ռազմական հասկացությունները հայերեն նոր բառերով ու արտահայտություններով անվանելու համար, օրինակ՝ դիպաշեղում (рикошет), զորէջք (десант), խրամուղի (траншея), խրամախորշ (ниша), գլխարկանշան (кокарда), ցատկերթ (марш-бросок), օդաշարժություն (баллистика) և այլն:

Ռազմական ոլորտի լեզվում յուրահատուկ խումբ են կազմում իմաստային նորաբանությունները, երբ բառը գործածվում է նոր, անցյալում չունեցած իմաստով կամ իմաստներով, այսինքն՝ տվյալ դեպքում բառը լեզվում վաղուց գործածվել է, սակայն ռազմական ոլորտի լեզվում ձեռք է բերել բոլորովին նոր նշանակություն:

Օրինակ՝ *ամրոցիկ* բառը էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» բացատրված է այսպես. «Դաշտային հողաշեն ամրոց՝ արտաքին պատերով ու խրամով»¹, իսկ ռազմագիտական լեզվում այս բառը նշանակում է «հրացանագնդացրային, երբեմն նաև հրետանային, շրջանաձև կրակ վարելու համար պաշտպանական կառույց»²: *Փունջ* բառը սկսել է գործածվել նաև որպես ռազմագիտական տերմին և ունի հետևյալ նշանակությունը՝ «նույն նշանակետի վրա հրաձգության ժամանակ մինևույն կրակային դիրքում տեղադրված մարտկոցի (դասակի) հրետանային հրամոթների (ականանետների, մարտական մեքենաների) փողերի փոխհամաձայնեցված ուղղություն»³:

Հարկավ, շատ նորաբանություններ ժամանակի քննությանը չեն դիմանում, լիարժեքորեն չեն կարողանում փոխարինել օտար բառերին և եթե անգամ գործածվում են մասնագիտական գրականության մեջ, ապա մասնագետներին հասկանալի լինելու համար նշվում է նաև հին տարբերակը: Օրինակ՝ ՀՀ ՁՈՒ մարտական պատրաստության նորմացույցների ժողովածուում համապատասխան վարժությունը կոչվում է. «*Երկրորդ պահեստուժի (էշելոնի, ռեզերվի) հակազորոհի անցումը*»: Կամ նույն ձեռնարկում գրված է. «*Ընդունիչ ցուցասարքը սարքաբերել ըստ տրված հաճախականության, համապատասխանեցնել ուղղորդման անկյունը (պելենգը) և որոշել աղբյուրի կոորդինատները*»⁴:

Իսկ բանավոր խոսքում ռազմական ոլորտի ակտիվ բառապաշարը շատ ավելի կայուն է ու «ավանդապահ»: Հատկապես «կրիտիկական» իրավիճակներում ոչ ոք երկարաշունչ հայերեն տարբերակը չի գործածում: Օրինակ՝ մարտական դիրքերում *ֆլանգ (фланг), ռուբեժ (рубеж), դազոր (дозор), գասադ (засада)* բառերի փոխարեն այսօր հրամանատարները գործածում են համապատասխանաբար *թև, բնագիծ, դետր, դարան* բառերը, և այս բառերի գործածությունը, կարելի է ասել, համատարած է: Սակայն բանավոր խոսքում *նիշա, բլինդաժ, դիվերսիա* բառերի փոխարեն երբեք *խրամախորշ, զետնատնակ, խափանարարություն* բառերը չեն գործածվում: Թեև այս բառերը համարվում են հաջող նորաբանություններ և լայնորեն գործածվում են հրամաններում, կարգադրություններում, դիրեկտիվներում, մեթոդական ուղեցույց-ձեռնարկներում ու համագորային կանոնադրությունների մեջ, այնուամենայնիվ թշնամու հանկարծակի հարձակման ժամանակ ոչ մի հրամանատար չի բղավում. «*Ուշադրություն, սա խափանարարություն է, զետնատնակից հանել նռնակները, տեղ զբաղեցնել N 3 խրամախորշում*»: Բերված օրինակը ցայտուն կերպով վկայում է, որ շատ բառերի հայերեն համարժեքներ պարզապես անհաջող են, իսկ զինվորականի

¹ **էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 37:

² **Լ.Քոթանջյան, Ս.Ներսիսյան**, Հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարան, Եր., 2006, էջ 49:

³ Նույն տեղում, էջ 79:

⁴ ՀՀ ՁՈՒ մարտական պատրաստության նորմացույցների ժողովածու, Եր., 2010, էջեր 24, 156:

ծառայողական պարտականությունների կատարման բնույթն այնպիսին է, որ անգամ մեծ ցանկության դեպքում նման երկարաշունչ ռազմական տերմինները հնարավոր չի լինի համատարած գործնականորեն կիրառել:

Հայերենի ռազմագիտական տերմինաբանության ձևավորման սկզբնական փուլերում որդեգրվել է հիմնականում **փոխառության** ուղին: Հր. Աճառյանը գրում է. «Նախահայերենը չուներ պատերազմական արվեստի, զենքերի և պետական կազմակերպության վերաբերյալ բառեր, վորոնք ավելի հետո պետք է փոխ առնվեյին իրանյաններից կամ ուրիշ ազգերից»⁵: Աճառյանը նշում է հնդեվրոպական նախալեզվից փոխանցված ռազմական ուլորտի ընդամենը 7 բառ՝ *աղմուկ (կռիվ, հնդեվրոպական նախալեզվի *pʰl-m- արմատից), գերի* (հնդեվրոպական նախալեզվում *ver), *թուր* (հնդեվրոպական նախալեզվում *tor), *կունք* (վահանի ուռուցիկ մասը, հնդեվրոպական նախալեզվում *gumb), *մարտ* (հնդեվրոպական նախալեզվի *mrd- արմատից), *նետ* (հնդեվրոպական նախալեզվում *nedo) և *սլաք* (երկար կոթով նիզակ, հնդեվրոպական նախալեզվի *kʷl ձևից՝ kʷl+աք)⁶: Այս բառերից մինչև այսօր իրենց իմաստները պահպանել են հինգը՝ *գերի, թուր, կունք, մարտ, նետ* բառերը, իսկ *աղմուկ* և *սլաք* բառերն իմաստափոխվել են: Իրենց իմաստը պահպանած պարզ բառերից կազմվել են ռազմագիտական նոր տերմիններ, օրինակ՝ *մարտավարություն, գերեվարել, թրատել, նետածիգ* և այլն: Հայերենին ռազմագիտական տերմիններ են անցել ասուրերենից՝ *բերդ*, ասորերենից՝ *խարք* (թուր), *շեղք*⁷, *սակուր* (տապար), *սուսեր* և այլն, արաբերենից՝ *ալափ* (ավար, կողոպուտ), *դարիթ* (երեք շարք թիեր ունեցող ռազմանավ), *խանչալ (խանչար)* (դաշույն), *սատիր* (տապար), *սլեհ* (զենք) և այլն, արամեերենից՝ *մանգանա* (քանդող պատերազմական գործիք), եբրայերենից՝ *ռասիմ* (սուրհանդակների գունդ), *քոռիմ* (թիկնապահ խունք), թուրքերենից՝ *բարուք* (վառող), *դալխան* (վահան), *ջիդա* (նիզակ, տեգ), *օրդու* (զորք, բանակ) և այլն, լատիներենից՝ *արմա* (զինանշան), *դալսար* (տապար), *պղեմբատ* (որպես զենք գործածվող կապարե գունդ), հունարենից՝ *ակառն* (բերդ, ամրոց), *դրունգար* (վաշտի հրամանատար), *լեգեոն* (հռոմեական զինվորական ստորաբաժանում), *կոնդակ* (նիզակ), *կորբան* (սաղավարտ), *մանկլավ* (լախտ, գավազան), *տյուրոն* (նորակոչիկ զինվոր), *փաղանգ* (գունդ, բանակ) և այլն, վրացերենից՝ *կապարծ*:

Փոխառություններն առավել շատ են եղել իրանական լեզուներից: Աճառյանը դրանք ներկայացնում է երկու խմբով⁸. զինվորական տարբեր երևույթներ անվանող բառեր, ինչպես՝ *սպշուպ* (խռովություն), *սպուռ* (ավար, կողոպուտ), *սպստամբ*,

⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 1940, էջ 125:

⁶ Տես նույն տեղը, էջեր 34-80:

⁷ Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում, որ *շեղք* բառը բնիկ հնդեվրոպական լինի՝ *skhel-*(s)kel-p- «կտրել» արմատից (տես Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 585):

⁸ Տես Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 1940, էջ 296:

ասպատակ (ծիով արշավանք), *ասպահապետ*⁹ (զորապետ), *արշավ*, *լաշկար* (զորք, բանակ), *հեն* (թշնամի, հրոսակ), *հրաման*, *պատերազմ*, *պարեկ*, *սպա*, *վաշտ* և այլն, և ժամանակին գործածվող տարատեսակ զենքերի անվանումներ՝ *աշտե*, *ասպար* (պաշտպանական զենք, վահան), *բահլիկ* (պատերազմական զրահ), *խիշտ* (նիզակի տեսակ), *նիզակ*, *սաղավարտ*, *վահան*, *վիրոզ* (քարկոծելու համար մեծ քար), *տասպար*, *տեգ*, *քաման* (աղեղ) և այլն:

Բացի այդ՝ Աճառյանը ներկայացնում է նաև մի շարք բառեր, որոնց ստուգաբանությունը ստույգ հայտնի չէ, ինչպես՝ *սվին*, *վաղր* բառերը: Այս բառերի ծագման վերաբերյալ նույն տեսակետն է հայտնում նաև Գ. Ջահուկյանը¹⁰:

Իրանական լեզուներից կատարված փոխառությունները ոչ միայն թվով ամենաշատն են, այլև ռազմական ոլորտի լեզվի բառապաշարի ձևավորման ու հարստացման տեսակետից՝ ամենաարժեքավորը: Բավական է նշել այն փաստը, որ մնացած լեզուներից կատարված բոլոր փոխառություններից, որոնք թվով 64-ն են, այսօր ռազմական ոլորտի լեզվում գործածվում են միայն *բարուք*, *խանչալ* (խսկց.), *շեղք*, ինչպես նաև անհայտ ծագման *սվին* բառերը: Իսկ իրանական 91 փոխառություններից 24 բառեր ռազմական ոլորտի լեզվի համագործածական բառապաշարի մաս են կազմում, ինչպես՝ *արշավ*, *ավար*, *ատրճանակ*, *բանակ*, *գրոհ*, *գունդ*, *դարան*, *թալան*, *թիրախ*, *թշնամի*, *գունարտակ*, *զրահ*, *դաշույն*, *սաղավարտ*, *համհարգ*, *հրաման*, *հրահանգ*, *ճամբար*, *նահանջ*, *պայքար*, *պատերազմ*, *պարեկ*, *սպա*, *վաշտ*, ճիշտ է, հիմնականում ենթարկվել են որոշակի իմաստափոխության, օրինակ՝ *սպա* բառը գրաբարում ունեցել է «զորք, զորամիավորում» իմաստը, *գունարտակ* բառը նշանակել է «խումբ, զորքի բազմություն», այժմ ստորաբաժանումային միավոր է:

Վերոնշյալ փոխառությունների մի մասը միջնորդավորված է: Օրինակ՝ *գայիտն*, *դրունգար*, *լեզեոն*, *սաղերոպ*, *քոռին* փոխառությունները մեզ անցել են հունարենից, սակայն հունարենն իր հերթին դրանք փոխառել է համապատասխանաբար լատիներեն *gaesum*, *drungus*, *legio* և եբրայերեն *səḏēōth*, *kārī* բառերից:

Տարբեր ժամանակաշրջաններում կատարված այս փոխառությունները, անշուշտ, մեր լեզվում գործառական նույն արժեքը չեն ունեցել: Դրանց մեջ կան շատ բառեր, որոնք, ըստ Աճառյանի, հայերենում կիրառվել են միայն 1-2 անգամ: Օրինակ՝ *արմա*, *լաշկար*, *բահլիկ*, *դմիշկ*, *խորավարան*, բառերը հանդիպում են մեկական անգամ, *ասպահապետ*, *ռասիմ* բառերը՝ երկուական:

⁹ Լ. Յովհաննիսյանը նշում է, որ *ասպահապետ* բառի համար ներկայացվող «զորապետ, սպարապետ» իմաստները կասկածելի են, որովհետև հայերեն ավանդված օրինակներում դրանք չեն գիտակցվում (տե՛ս Լ. Յովհաննիսյան, Յայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 198):

¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Յայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 689, 702:

Իհարկե, վերոնշյալ օրինակները **հին կամ հնագույն փոխառություններ են**, և դրանցից այն բառերը, որոնք մինչ այսօր գործածվում են հայերենում, արդեն իբրև օտար բառեր չեն գիտակցվում: Այսօր գիտակցվում է հետևյալ տերմինների փոխառյալ լինելը. **նոր կամ նորագույն փոխառություններ**, որոնց հայերեն համարժեքները չկան (կամ անհաջող են), մեծ մասը ռազմական ոլորտի լեզվի համագործակցական բառապաշարի մեջ է մտնում և ամենօրյա հաճախակի կիրառություն ունի՝ *տանկ* (ռուս. ՑՈՎՍ < անգլ. tank, արևմտահայերեն *հրասայլ* բառը 33 զինված ուժերում տանկ բառի փոխարեն այդպես էլ չգործածվեց), *բրիգադ* (ռուս. ոՐՌ-չՈՊՈ < ֆր. brigade), *դիվիզիա* (ռուս. ՊՈՉՈՋՈՒ՛ < լատ. divisio), *կորպուս* (ռուս. ՍՏՐտցր < լատ. corpus), *գեներալ* (ռուս. չավարՈս < լատ. generalis ընդհանուր, գլխավոր), *սերժանտ* (ռուս. ռպՐՁՈՎՑ < ֆր. sergent) և այլն: Փոխառություններից հայոց լեզվի բառակազմական միջոցներով կազմվում են նոր բառեր, ինչպես՝ *բազային*, *բազավորում*, *դեսանտային*, *դեսանտավորում*, *շտաբային*, *ռեզերվային*, *օպերացիոն* և այլն, որոնք նույնպես լայնորեն կիրառվում են:

Մինչև նոր ու հաջող հայերեն համարժեք բառի առաջանալը հինը գիտակցվում է իբրև փոխառություն, սակայն նոր բառի հաղթելուց և բառապաշարում հաստատվելուց հետո փոխառությունը վերածվում է **օտարաբանության**: Դեպքում, եթե հաղթում է օտար ձևը, այսինքն՝ հայերեն համարժեքը հաջող չէ, վերջինս կարող է համարվել **մաքրամոլություն**: Օրինակ՝ ռազմական ոլորտի լեզվում *հրասայլ* (տանկ), *կողմնացույց-անկյունաչափ* (բուսուլ), *հրետաթումբ* (բարբետ), *ձգաբանություն* (բալիստիկա), *խափանարարություն* (դիվերսիա), *սավառնակախումբ* (եսկադրիլիա) բառերը չեն գործածվում անգամ պաշտոնական գրություններում և մեթոդական ուղեցույցներում: Այս բառերի գործածությունը համարվում է **մաքրամոլություն**, որովհետև դրանք կամ հնչյունական կազմով են անհաջող, կամ լիովին չեն արտահայտում բառիմաստը, իսկ դրանց փոխարեն հաջողությամբ կիրառվում են փոխառյալ տարբերակները:

Իսկ ահա *1. բաննիկ*, *2. մարշ-բրոսոկ*, *3. կոկարդ*, *4. շուպ*, *5. բոյնիցա*, *6. միշա*, *7. բլոկադա*, *8. գարնիզոն*, *9. կոմպլեկտ*, *10. ադյուտանտ*, *11. մոբիլիզացիա* (զորահավաք իմաստով), *12. էշելոն*, *13. պոստ*, *14. էկիպիրովկա*, *15. էվակուացիա* բառերը կարելի է համարել **օտարաբանություններ**, քանի որ գրավոր ու բանավոր խոսքում արդեն հաջողությամբ օգտագործվում են դրանց հայերեն համարժեքները՝ համապատասխանաբար *1. ներմաքրիչ*, *2. ցատկերթ*, *3. գլխարկանշան*, *4. զոնդոց*, *5. հրակնատ*, *6. խրամախորշ*, *7. շրջափակում*, *8. կայագոր*, *9. լրակազմ*, *10. համհարգ*, *11. զորահավաք*, *12. շարակարգ*, *13. պահակակետ*, *14. հանդերձավորում*, *15. տարիանում* բառերը:

Ուզանական ոլորտի լեզվում բավականին շատ են իմաստային ու կառուցվածքային **պատճենումները**, օրինակ՝ *ազատ* (նոր իմաստը ստացել է ռուսերեն *волено* բառի օրինակով), *արծակում* (օրվա ընթացքում զորամասի տարածքից

բացակայելու ժամանակավոր՝ միքանիժամյա թույլտվություն, նոր իմաստը ստացել է ռուսերեն *увольнение* բառի օրինակով), *ժավալում* (մարտակարգի անցում մի տեսակից մյուսը, նոր իմաստը ստացել է ռուսերեն *развертывание* բառի օրինակով) և այլն: Իմաստային պատճենման տիպիկ օրինակ է որոշ՝ հատկապես խորհրդային զինված ուժերում ծառայած զինվորականների կողմից *«կա»* բառի անհարկի գործածությունը *«լսում են»* արտահայտության փոխարեն՝ ռուսերեն *есть* բառի համաբանությամբ: Շատ են նաև կառուցվածքային պատճենումները, ինչպես՝ *бесоткатное* - անհետզվորք, *бронетранспортер* - զրահափոխադրիչ, *ракетоносец* - հրթիռակիր, *светомаскировка* - լուսաքողարկում և այլն:

Ռազմական ոլորտի բառապաշարում **հնաբանությունները** պայմանավորված են զենքերի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի, ինչպես նաև զինվորական տարբեր հասկացությունների հնամալով և գործածությունից դուրս գալով: Օրինակ՝ դարեր առաջ հայ զինվորը պատերազմել է *զեղադրով*, *լախտով*, հայոց զորքը ճակատամարտի ժամանակ կիրառել է *կարե* մարտակարգը, և այս բառերը լայնորեն գործածվել են, այնքան ժամանակ, մինչև տվյալ զենքերը հնացել ու գործնական կիրառությունից դուրս են եկել, կամ տվյալ մարտակարգը սկսել է այլևս չկիրառվել ռազմական գործողությունների ժամանակ: Ռազմական ոլորտի լեզվի հնաբանությունները մտնում են հնաբանությունների այն տեսակի մեջ, որոնք հայերենագիտության մեջ կոչվում են պատմաբաներ, օրինակ՝ *ասպար* - պաշտպանական զենք, որ կռվողները կրում էին ձախ թևի վրա, վահան, փոխառվել է պահլավերեն *aspar* ձևից, *բերդ* - մշտական պաշտպանության համար կառուցված ամրություն, ամրոց, փոխառված է ասորերեն *birti* (*birtu*) բառից, *լեզեռն* - զորական խոշոր միավորում Հին Հռոմում, փոխառվել է հունարենից, որն իր հերթին լատիներեն *legio* բառից, *կապարծ* - նետ պահելու փայտե կամ կաշվե աման, նետաման, փոխառվել է վրացերեն *կապարծա* բառից, *տասպար* - միասայր կամ երկսայր կացնաձև զենք, փոխառվել է պահլավերեն *tapar* բառից, և այլն: Կան զինվորական հնաբանություններ, որոնք, ինչպես հայերենի շատ բառեր (օր.՝ նախարար բառը), դարեր շարունակ դուրս են մնացել գործածությունից և համարվել հնաբանություններ, սակայն մեր օրերում դարձյալ վերադարձել են համագործածական բառապաշար՝ արտահայտելով նոր կամ նախկինին մոտ իմաստներ: Օրինակ՝ *սաղավարտ* բառը դարեր շարունակ չի գործածվել, սակայն այժմ զորամասերում ամենօրյա գործածության բառ է դարձել, ճիշտ է՝ ենթարկվելով որոշակի իմաստային փոփոխության, նախկինում համարժեք էր ռուսերեն *шлем* բառին, այժմ՝ *каска*:

Ոչ միայն ռազմական ոլորտի բառապաշարի ուսումնասիրության ժամանակ, այլև զինված ուժերի առօրյա գործունեության ընթացքում հաճախ են հանդիպում բառագործածության սխալներ, երբ ռազմական այս կամ այն տերմինը գործածվում է մյուսի փոխարեն, կամ գործ ունենք տերմինի սխալ թարգմանության հետ: Ռազմական ոլորտում բառագործածության ամենատարածված սխալներից է *մարտական*

պատրաստություն և մարտական պատրաստականություն տերմինների՝ մեկը մյուսի փոխարեն գործածելը: Առաջինի ռուսերեն համարժեքն է *боевая подготовка*, երկրորդինը՝ *боевая готовность*: *Մարտական պատրաստությունը* ուսուցման գործընթաց է, իսկ *մարտական պատրաստականությունը* զինծառայողի կամ ստորաբաժանման պատրաստվածության մակարդակը՝ մարտ մղելու համար: Սրանք, ըստ էության, հարանուններ են, ինչպես նաև *զինամարզություն* (զինավարժություն, զենք գործածելու վարժանք) - *զինամարտություն* (մենամարտելը) - *զինապարտություն* (զորակոչի ենթակա լինելը), *ռազմակալություն* (ռազմանուլություն) - *ռազմականություն* (ռազմական բնույթ կրող) և այլ բառեր:

Հաճախ սխալ են գործածվում նաև *մարտավարություն* և *ռազմավարություն* տերմինները՝ չնայած իմաստային զգալի տարբերությանը: Մեծ ռազմագետ Կարլ Կլաուզեֆցը այսպես է բացատրում. «Մարտավարությունը ռազմավարության իրականացման գործիքն է և ենթարկվում է ռազմավարության հիմնական նպատակին: Ռազմավարությունը իր հիմնական նպատակին հասնում է միջանկյալ մարտավարական խնդիրների լուծմամբ»¹¹:

«Բառակազմական առանձնահատկությունները» ենթազլխում ներկայացված է ռազմական ոլորտի բառապաշարի բառակազմական քննություն: Ինչպես մեր լեզվի ամբողջ բառապաշարում, այնպես էլ ռազմական ոլորտի լեզվում պարզ բառերն անհամեմատ քիչ են: Այլ Մարգարյանը նշում է, որ բառարանային 1000 բառերի մեջ սովորաբար 60-70 բառերն են պարզ կամ, այլ կերպ ասած, 6-7 տոկոսը¹²: Ռազմական ոլորտի լեզվում այս ցուցանիշն ավելի է նվազում՝ հասնելով մոտ 3-4 տոկոսի: Սա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ ռազմագիտական տերմինների մեծ մասը նորաստեղծ է և բնականաբար ունի բաղադրյալ կազմություն: Պարզ բառերը, սակայն, քանակով քիչ լինելով հանդերձ, բառակազմական մեծ դեր են կատարում լեզվում: Հանդես գալով բաղադրության տարբեր դիրքերում՝ սկզբում, միջնամասում, վերջում՝ դրանք բազմաքանակ նոր բառեր են կազմում:

Ռազմական ոլորտի բառապաշարի բառակազմական քննությունը կատարված է համաժամանակյա մոտեցմամբ, այսինքն՝ բուն բառակազմական վերլուծությամբ: Օրինակ՝ *խրամածեղք* բառում մեզ հետաքրքրում է այն, թե խոսքիմասային ինչ կաղապարով է կազմվել բառը (գոյական + գոյական), ինչ բառակազմական քայլերով, և ոչ թե այն, թե պատմական որևէ փուլում արդյո՞ք *խրամ* արմատի մեջ *աւ*-ը ածանց է եղել: Լեզվաբանական ուսումնասիրությունները փաստում են նաև, որ քանի բաղադրիչներից էլ կազմված լինի բառը, բառակազմական տեսակետից ցանկացած քայլում այն երկբաղադրիչ է, այսինքն՝ միշտ ունենում ենք հիմք + 1 կամ 1 + հիմք

¹¹ Տե՛ս **Карл Клаузевиц**, Принципы ведения войны, Москва, 1991, էջ 38:

¹² Տե՛ս **Ալ. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 33:

կառուցվածք¹³: Ուստի ուսումնասիրության արժանի է նաև այն, թե որն է տվյալ ռազմական տերմինի բառակազմական վերջին քայլը: Օրինակ՝ *խրամածեղք* բառի վերջին քայլը բառաբարդումն է, ոչ թե ածանցումը, որովհետև *ք* ածանցը 1 քայլ առաջ է միացել: Ըստ այդմ՝ այս տերմինի բառակազմական բանաձևը կլինի (խրամ)ա[(ծեղ)ք]: Իսկ *համագորային* տերմինի կազմության վերջին քայլը ածանցումն է, ընդ որում ոչ թե *-ային* վերջածանցի, այլ *համա-* նախածանցի ավելացմամբ՝ *համա*[(գոր)ային]: Հետևաբար *խրամածեղք* բառը քննված է բառաբարդման բաժնում, իսկ *համագորային*-ը՝ նախածանցավոր բառերի թվում:

Զինվորական տերմինների թվում նախածանցավորները հատուկեմտ են, ինչպես՝ *ապածավալում*, *գերծճարիտ*, *հակագրոհ*, *ենթասպա*, *հակահարված*, *հակաօդային*, *համազարկ* և այլն: Ավելի մեծ թիվ են կազմում *սերող հինք + վերջածանց* կաղապարով ռազմագիտական տերմինները, որը, անշուշտ, բխում է հայերենում ձևավորված բառակերտական ավանդույթից, որում վերջածանցումն առավել կենսունակ է: Ռազմական տերմինների կազմման գործընթացում առավել մեծ ակտիվություն են ցուցաբերում *-ակ* (դասակ, հետևակ, նոնակ), *-ական* (զինվորական, հետախուզական, մարտական), *-ային* (զնդային, դիրքային, կայագորային), *-ություն* (դիմադրություն, ծառայություն, հրաձգություն), *-ում* (ականապատում, ծավալում, շրջափակում), ինչպես նաև *-անոց*, *-(ա)վոր*, *-իչ*, *-ոց* վերջածանցները:

Ռազմական ոլորտի լեզվում հանդիպում են սովորական, ոչ դարձվածքային հարադրական բարդություններ՝ և՛ բայական, և՛ անվանական: Գործածվում են որոշ բայական կապակցություններ, որոնք կարելի է **բայական** հարադրություններ համարել, օրինակ՝ *գրոհի անցնել* (*գրոհել*), *դիրք գրավել*, (*դիրքավորվել*), *զենք վերցնել*, *կրակ վարել*, *համազարկ տալ*, *հետ մղել*, *նշան բռնել*, *պատվի առնել* և այլն:

Ավելի շատ են անվանական հարադրությունները՝ *զեներալ-մայոր*, *դիվերսիոն-հետախուզական*, *դիտորդ-դիպուկահար*, *ծառայողական-մարտական*, *հսկիչ-անցագրային* (հսկիչ-անցագրային կետ), *նշանառու-օպերատոր*, *ոչնչացնող-դիպուկահար*, *սերժանտ-հրահանգիչ*, *սպա-հոգեբան*, *սվին-դանակ*, *վրան-թիկնոց* (пращ-панатка), *ցամաքային-օդային*, *օպերատիվ-մարտավարական* և այլն:

Ռազմական ոլորտի բառապաշարում ավելի շատ հանդիպում են համադրական իսկական բարդություններ, որոնք մեծ մասամբ կազմվում են հոդակապով: Առավել գործուն են հետևյալ բառակազմական կաղապարները¹⁴. **գոյական + գոյական** (զինաբուրգ, զորահանդես, լից(ք)ապարկ), **բայահիմք + գոյական** (դիպաշեղ(ում), սուզասար(ք), պայթափաթեթ), **գոյական + բայահիմք** (ականանետ, դասալիք, զորակոչ), **գոյական + ածական** (մարտուն(ակ), տանկ(ան)վտանգ), **մակբայ +**

¹³ Տե՛ս **Ս. Գալստյան**, Դպրոցական բառակազմական բառարան, Եր., 2011, էջ 5:

¹⁴ Բառերի կաղապարները քննվել են ըստ բառակազմական վերջին քայլի, ըստ այդմ՝ հիմքերում կարող են լինել նախորդ քայլերում ավելացած ածանցներ, որոնք վերցված են փակագծերի մեջ:

բայահիմք (առաջապահ, վերջապահ, վերթիռ), **ածական + բայահիմք** (գաղտնակիր, ուղղապահ), **ածական + գոյական** (ամրաշրջ(ան), բնագիծ), **բայահիմք + ածական** (պայթակայ(ուն), պահուն(ակ)): Շատ են նաև այնպիսի բաղադրյալ տերմինները, որոնք երկուսից ավելի արմատներից են կազմված, ինչպես՝

[(գրահ)ա]{(վոդ)ա(դր)}իչ - ծանր մարտական տեխնիկա տեղափոխող մեքենա,
{[(խափ)ան]արար}ա[(հետ)ա(խուզ)ական] - հակառակորդի թիկունքում հետա-

խուզական և քայքայիչ գործունեություն ծավալելու համար նախատեսված հատուկ պատրաստված ստորաբաժանում¹⁵,

[(հր)(թիռ)]ա(կիր) - այն սուզանավերի, վերջրյա նավերի ընդհանուր անվա-
նունը, որոնց զենքը տարբեր նշանակության հրթիռներ են,

{[(հր)(թիռ)]ա(կոծ)}ել - հրթիռային կրակ վարել,

(պատժ)ա[(գոր)ա(մաս)] - զորամաս, որտեղ պատիժ են կրում զինվորական հանցագործություն կատարած զինծառայողները:

Քանի որ զինվորական հաղորդակցություններում խոսքը կառուցվում է առավել-
լագույնս սեղմ և հակիրճ, բնականաբար, ռազմական ոլորտի բառապաշարում մեծ
տեղ են գրավում հապավումները: «Գնալով շատանում է ռազմական ոլորտի լեզվում
հապավումների կիրառությունը, որոնք գործածվում են ինչպես բանավոր, այնպես էլ
գրավոր խոսքում, զորային հասկացությունների, ստորաբաժանումների ու զենքերի
երկար անվանումների փոխարեն», - գրում է եգ. Ստեպանովը՝ փաստելով նաև, որ
«հապավումներ ամենաշատը ԱՄՆ զինված ուժերի փաստաթղթերում են կիրառվում»¹⁶:
Ռազմական ոլորտի լեզվում գործածվում են բոլոր տեսակների հապավումները՝
տառային (*ԻՁՎ* - ինժեներական զորքերի վարչություն, *ՊՇ* -պաշտպանական շրջան,
ՅՄՄ- հետևակի մարտական մեքենա), **վանկային** (*զինկոմ*, *ՅրԲր* – հրետամային
բրիգադ, *ՅրթԲր* - հրթիռային բրիգադ) և **խառը** (*զինզորքույկ*, *զինպարետ*, *ՅՆՂԱԲր* -
հատուկ նշանակության առանձին բրիգադ): Ջինված ուժերում հանդիպող հապա-
վումները հիմնականում նորաստեղծ կազմություններ են և արձանագրված չեն
հապավական բաղադրություններն ընդգրկող արդի բառարաններում:

Երկրորդ գլուխը վերնագրված է **«Քերականական իրողությունները ռազմական
ոլորտի լեզվում»**: **«Ձևաբանական իրողություններ»** ենթագլխում ներկայացված են
խոսքի մասերի, դրանց քերականական կարգերի ոճական առանձնահատկությունները
ռազմական ոլորտի լեզվում:

¹⁵ Էդուարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ընդգրկված է *խափանարարություն* բառը, որը բացատրվում է այսպես. «Ռազմական կամ պետական նշանակություն ունեցող ձեռնարկությունների քայքայումը, շարքից հանելը հակառակորդի թիկունքում կամ որևէ երկրում, դիվերսիա» (**Էդ. Ադայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1976, էջ 572):

¹⁶ **Е. А. Степанов**, Языковая картина мира военной сферы, Москва, 2012, էջ 6:

խոսքի մասերի քերականական հատկանիշների, ձևաբանական զուգաձևությունների ու տարբերակների նրբերանգները ռազմական ոլորտի լեզվում, զինվորական հաղորդակցություններում խոսքի ձևավորման, պատկերավորման ու արտահայտչական առումներով մեծ դեր են կատարում: Հատկապես «ակտիվ են» գոյականի, դերանվան և բայի քերականական կարգերը: Ձինվորական հրամաններում բավականին հետաքրքիր դրսևորումներ ունի գոյականի հոլովի քերականական կարգը: Օրինակ՝ շատ դեպքերում կոչականի փոխարեն տրական հոլովով դրված գոյականով է նշվում, թե կոնկրետ ում է վերաբերում հրամանը, օրինակ՝ «շարքային այսինչյանին՝ պատրաստվել», «մարտկոցին՝ կրակել», «վաշտին՝ կանգնել» և այլն: Այս կառույցը, պետք է նշել, պատճենվել է ռուսերենից ու թեև լայնորեն կիրառվում է թե՛ բանավոր խոսքում, թե՛ մասնագիտական գրականության մեջ, այնուամենայնիվ մախրմտրելի ձև չէ: Ձինվորական հրամաններում գոյականները հանդես են գալիս տարբեր հոլովածներով, օր.՝ «ստուգման շարվիր», *«մարտի»*, *«հակառակորդը՝ ծակատից»*, *«երթային շարասյունով»*, *«տեղերում»* և այլն:

Ռազմական ոլորտի լեզվում ոճական առումով բավականին մեծ արտահայտչականություն ունի գոյականի թվի քերականական կարգը: Առավել հետաքրքիր դրսևորումներից է, երբ գոյականի եզակի թիվը հանդես է գալիս իր այն իմաստային յուրահատկությամբ, որով արտահայտում է ոչ թե մեկ առարկա, այլ առարկայի տվյալ տեսակն ընդհանրապես, առարկայի ընդհանուր, հավաքական նշանակություն¹⁷: Եզակի թվի նման կիրառությունները հատուկ են հատկապես զինվորական կանոնադրություններում տրված ընդհանուր սահմանումներին ու կանոններին: Օրինակ՝ ՀՀ ՁՈՒ շարային կանոնադրության 25-րդ և 26-րդ հոդվածներում համապատասխանաբար գրված է. *«Հրամանատարը պարտավոր է ստուգել ենթակաների արտաքին տեսքը, ինչպես նաև հանդերձանքի առկայությունը...»*, *«Ձինձառայողը պարտավոր է ստուգել իր զենքի սարքինությունը, իրեն ամրացված սպառազինությունը...»*¹⁸: Հասկանալի է, որ խոսքը ոչ թե կոնկրետ որևէ հրամանատարի կամ զինձառայողի է վերաբերում, այլ ընդհանրապես բոլոր հրամանատարներին և զինձառայողներին:

Չնայած **ածականները** գործառական բոլոր ոճերում կիրառության բարձր հաճախականություն ունեն և հատկապես զեղարվեստական խոսքում ոճական մեծ արժեք են ներկայացնում, այնուամենայնիվ ռազմական ոլորտի լեզվում համեմատաբար պասիվ են, կիրառությունը՝ սակավ, և ածական անունը զինվորական խոսքային իրադրություններում, կարելի է ասել, ոճական առումով չեզոք է: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ընդհանրապես զինվորական խոսքը

¹⁷ Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, հ. 2, Եր., 1974, էջ 47:

¹⁸ ՀՀ ՁՈՒ շարային կանոնադրություն, Եր., 2010:

առավելագույնս հակիրճ ու կտրուկ է, հնարավորինս զերծ գնահատող, վերաբերմունք արտահայտող բառերից, իսկ եղանակավորող բառերը՝ վերաբերականները, ծառայողական հաղորդակցության մեջ ընդհանրապես բացակայում են: Ոճական առունով թույլ է նաև **մակբայների** դերը: Այնուամենայնիվ, զինվորական մեկ-երկու տասնյակ հրամաններ (հիմնականում՝ շարային), կազմված են հատկանիշ ցույց տվող բառերով կամ դրանց օգնությամբ, օրինակ՝ *«հավասար», «զգաստ», «ուղիղ», «ազատ», «լայն քայլ», «դանդաղ քայլ», «հաճախաքայլ», «համաքայլ», «բարձր», «ցածր»* (հրամաններ նշանառության ուղղորդման համար): Սրանց մի մասը ձևաբանության մեջ դիտվում են ինչպես «մաքուր» ածականներ, օրինակ՝ *ազատ, բարձր, ցածր* բառերը, սակայն զինվորական հրամաններում մշտապես գործածվում են մակբայական կիրառությամբ, նույնիսկ եթե հանդես են գալիս միայնակ, այսինքն՝ հասկանալի է, որ *«ազատ»* հրամանը նշանակում է ազատ կանգնել, *«ուղիղ»* հրամանը՝ ուղիղ քայլել, *«բարձր»* հրամանը՝ բարձր կրակել, և այլն:

Դերանուններից շատ են հիմնականում անձնական դերանունները՝ դրված տարբեր հոլովածներով: Առավել շատ դերանուններ են հանդիպում շարային պատրաստության զորահրամաններում: Օրինակ՝ պետը դիմում է ենթակային. *«Շարքային այսինչյան»:* Ջինծառայողը, լսելով իր ազգանունը, շրջվում է դեպի պետը. *«Ես եմ»:* *«Ինձ մոտ»*, - հրամայում է պետը, և նրան մոտենալով՝ զինծառայողը զեկուցում է. *«Շարքային այսինչյանը ներկայացել է Ձեր հրամանով»:*

Ռազմական ոլորտի լեզվում բոլոր խոսքի մասերից ամենամեծ դերը վիճակված է բային: Սա բնական է, որովհետև, ըստ էության, ռազմական ոլորտի լեզվի առանձնահատկությունները և ոճը ընդգծված կերպով են արտահայտված հատկապես զինվորական հրամաններում, իսկ դրանց մեծամասնության մեջ գլխավոր դերակատարությունը բայինն է: Ջինվորական հրամանների մեծ մասը, բնականաբար, կազմվում է հրամայական եղանակի բայածներով, ինչպես՝ *«շարվիր», «ելձան դրություն ընդունիր», «վարժությունը սկսիր»:* Հրաման են արտահայտում նաև անդեմ նախադասությունները, որոնցում հրամայական եղանակի բայի փոխարեն հանդես է գալիս անորոշ դերբայը՝ իր վրա կրելով հրամայական շեշտը, ինչպես՝ *«թողնել», «ավարտել», «շարքից դուրս գալ», «կատարել», «կարգի բերել»* և այլն: Հրամայական եղանակի իմաստ երբեմն արտահայտվում է նաև սահմանական եղանակի անկատար ներկա ժամանակաձևի 2-րդ դեմքի բայածներով, օրինակ՝ *Անմիջապես գնում եք, ներկայանում անմիջական հրամանատարին և զեկուցում եղելության մասին:*

Ոճական ինքնատիպ դրսևորում է անկատար ներկայի 1-ին դեմքի հոգնակի թվի կիրառությունը հրամայական իմաստով, օրինակ *ժամը 2-ին հարձակվում ենք նշված բնագծի ուղղությամբ, գրավում ենք հակառակորդի դիրքերը, ստիպում նահանջել:*

Պետի կողմից ենթակային հրամաններ են տրվում նաև ենթադրական (պայմանական) եղանակի բայերով, մասնավորապես ենթադրական եղանակի

ապառնի ժամանակի 2-րդ դեմքի բայաձևերով, օրինակ՝ *Կեսօրից հետո կզնան գինապահեստ, կվերցնես 5 փամփուշտ և կներկայանաս ինձ*:

Հանձնարարություններ, ցուցումներ տալիս գործածվում են նաև հարկադրական եղանակի ապառնի ժամանակի 2-րդ դեմքի ժամանակաձևերը, օրինակ՝ *Եթե անձնակազմի շրջանում խուճապ սկսվի, դու պիտի կարողանաս վերահսկել իրավիճակը, վերականգնել ենթակաների վստահությունը և մեկ անգամ ևս բոլորին պիտի հիշեցնես մարտական խնդիրը*: Հարկադրական իմաստ է արտահայտվում նաև պետք է + անորոշ դերբայ, հարկավոր է + անորոշ դերբայ, անհրաժեշտ է + անորոշ դերբայ կառույցներով, որոնք համեմատաբար ավելի մեղմ են հնչում՝ *պետք է կատարել, հարկավոր է կրակել* և այլն:

Ռազմական ոլորտի լեզվում ուշագրավ ոճական դրսևորումներ ունի բայի թվի քերականական կարգը: Մասնավորապես միայն զինվորական խոսքում է, որ մի քանի անձանց հրաման տալիս բայը դրվում է ոչ թե հոգնակի, այլ եզակի թվով: Օրինակ՝ դպրոցում ուսուցիչը երբեք ամբողջ դասարանին կանգնեցնելու համար չի ասի՝ *կանգնիր*, շարք կանգնեցնելու համար՝ *շարվիր*, իսկ հրամանատարները ամբողջ ստորաբաժանմանը հրաման տալիս բայը միշտ գործածում են եզակի թվով՝ *ցրվիր, շարվիր, պառկիր* (փոխանակ՝ ցրվեք, շարվեք, պառկեք): Գիշտ է՝ շատ դեպքերում հրամանը տվողի կողմից նախ նշվում է կոչականը՝ *«ջոկ, ցրվիր»*, *«դասակ, շարվիր»*, *«վա՛շտ, պառկիր»*, սակայն պարապմունքների ժամանակ հաճախ հրամանը տրվում է նաև առանց կոչականի, հատկապես երբ բայի իմաստից հասկացվում է, որ խոսքը ամբողջ խմբի մասին է, ինչպես՝ *շարվիր, բացազատվիր, ցրվիր* և այլն:

Ռազմական ոլորտի լեզվում բայի դեմքի քերականական կարգը մի հետաքրքիր դրսևորում ունի: Ոճաբանության մեջ հայտնի է «հեղինակային մեմբ»-ը, որը գիտական, հրապարակախոսական ոճերում գործածում են հեղինակները՝ դրանով չցանկանալով հատուկ կերպով ընդգծել, առանձնացնել իրենց «ես»-ը: Երբեմն ոճական նպատակով հեղինակային «ես»-ի փոխարեն գործածվում են նաև «տողերիս հեղինակը», «նվաստս» և նման արտահայտություններ¹⁹: Ռազմական ոլորտի լեզվում նման ոճական արտահայտության օրինակ է, երբ վերադաս հրամանատարին զեկույցի ժամանակ զեկուցողը իր մասին ոչ թե առաջին դեմքով է արտահայտվում, այլ երրորդ, օրինակ՝ կրակային պատրաստության պարապմունքի ժամանակ կրակելու թույլտվություն ստանալու համար ենթական պետին զեկուցում է. *«Շարքային այսինչյանը պատրաստ է մարտի»*:

Ռազմական ոլորտի լեզվում ոճական արտահայտչականություն ունի խոսքի մասերի փոխանցումը: Շատ է հանդիպում ածական > գոյական խոսքիմասային փոխանցումը: Ռազմական ոլորտի լեզվում գործածվում է բառերի մի ողջ շարք, որոնք

¹⁹ Տե՛ս Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, ԵՊՀ հրատ., Եր., 2007, էջ 265:

երկարժեք են, այսինքն՝ և՛ գոյական են, և՛ ածական: Դրանք հիմնականում *-ական, -ային, -ավոր* վերջածանցներ ունեցող բառերն են, որոնք երկու նշանակությամբ էլ կիրառվում են ռազմական ոլորտում: Օրինակ՝ *զինվորական, զծային* (զորահանդեսի կամ շարային ստուգատեսի ժամանակ առանձնացված զինվորներ ստորաբաժանումների միջև տարածությունները նշելու համար), *գրոհային, հետևակային* (հետևակի զինվոր), *բանակային, ծակատային, սակրավոր, վիրավոր*:

Օրինակ՝ «Վաշտ, զգաստ, հանդիսավոր երթի, ըստ դասակների, հեռավորությունը՝ մեկ *զծային* (ածական), առաջին դասակը (ղեկավարող խումբը) ուղիղ, մյուսները՝ աջ դարձ»: Դասակների աջթևայինները շարվում են *զծայինների* (գոյական) նշած գծի ուղղությամբ, նրանցից մեկ քայլի վրա²⁰:

Խոսքի մասերի փոխանցումների մեջ առանձին դեր ու կշիռ ունի **փոխանունությունը**՝ ոչ գոյական խոսքի մասերի՝ գոյականի առում ստանալը և գոյականական կիրառությունը: Փոխանունների միջոցով զինծառայողները խուսափում են ավելորդ կրկնություններից ու երկարաբանություններից, խոսքը դառնում է առավել հակիրճ ու հավաք, որը, իհարկե, հատկապես մարտական իրադրություններում առավել քան անհրաժեշտ է: Այսպես՝ փոխանակ ասելու կամ գրելու՝ «Իմ զենքը դիպուկ է, իսկ *սերժանտ Պողոսյանի զենքը՝ ոչ»*, ասում կամ գրում ենք՝ «Իմ զենքը դիպուկ է, իսկ *սերժանտ Պողոսյանինը՝ ոչ»*:

«Շարահյուսական իրողություններ» ենթազվխում քննված է ռազմական ոլորտի լեզվում շարահյուսական քերականական կարգերի ու միավորների արտահայտչականությունը: Ռազմական ոլորտի լեզվում շատ են կայուն ոչ վերափմաստավորված բառակապակցությունները, ինչպես՝ *գերագույն գլխավոր հրամանատար, գլխավոր շտաբ, զինված ուժեր, պաշտպանության նախարարություն, շարային ստուգատես, շփման գիծ, չեզոք գոտի* և այլն: Կայուն ոչ վերափմաստավորված բառակապակցություններ են պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների անվանումները՝ *կադրերի և ռազմական կրթության վարչություն, օպերատիվ հետախուզության բաժին* և այլն, զինվորական մի շարք կոչումներ՝ *կրտսեր սերժանտ, ավագ սերժանտ, ավագ լեյտենանտ, ավագ ենթասպա*: Ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության՝ ռազմական ոլորտի բառապաշարում գերազանցապես գոյականական բառակապակցություններ են:

Այնուամենայնիվ, բառակապակցությունները, որոնք լեզվի նախահաղորդակցական և հիմնականում անվանողական միավորներ են, ռազմական ոլորտի լեզվում ոճական մեծ արտահայտչականություն չունեն: Ռազմական ոլորտի լեզվի շարահյուսական իրողությունները քննելիս ուսումնասիրության հիմնական միավորը **նախադասությունն** է՝ իր իմաստային, կառուցվածքային տարատեսակներով, զինվորական խոսքում դրանց ոճական-արտահայտչական կիրառություններով ու դերով:

²⁰ ՀՀ ՋՈՒ շարային կանոնադրություն, Եր., 2010, էջ 102:

Զինվորականի ամենօրյա ճշտակատարության ու արագագործության պայմաններում, բնականաբար, առավել ակտիվ են **միակազմ** նախադասությունները, որոնք, իսկապես, ոճական առումով բնորոշ են զինվորական հաղորդակցային իրադրությանը: Զինվորական հրամանների թվում շատ են դիմավոր միակազմ նախադասությունները՝ *կրակիր, շարվիր, վազիր, կանգնիր, սկսիր* և այլն: Վիթխարի դեր են խաղում նաև *անդեմ միակազմ* նախադասությունները: Բավական է ասել, որ շարային վարժաձևերի կատարման, շարային ստուգատեսների ժամանակ, մարտում հետիոտն կարգով կամ մեքենաներով գործելիս, տարբեր պարապմունքների ժամանակ, կայազորային և պահակային ծառայությունների ընթացքում, ինչպես նաև ԶՈւ տարբեր զորատեսակներում (ինժեներական, թիկունքային, հրետանային, ավիացիոն, կապի ստորաբաժանումներում) օգտագործող հրամանների գերակշիռ մասը անդեմ նախադասություններ են՝ **բայական կամ անվանական**: Բայական անդեմ նախադասություններից են՝ *«թողնել»* (տրվում է նախապես տրված որևէ հրամանի կամ պարզապես սկսված գործողության դադարեցման համար), *«ավարտել»* (տրվում է նախապես տրված որևէ հրաման, կարգադրություն կամ սկսված գործողություն ավարտելու համար), *«կատարել»* (կատարողական հրաման, որով ազդարարվում է հրամանի կատարման մեկնարկը), *«կարգի բերել»* (շարային հրաման, որը տրվում է ուղղելու համար զենքը, համազգեստն ու հանդերձանքը) հրամանները: Մեծ թիվ են կազմում նաև այնպիսի բայական անդեմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը՝ անորոշ դերբայը, հանդես է գալիս լրացմամբ կամ լրացումներով, այսինքն՝ ընդարձակ բայական անդեմ նախադասություններ, օրինակ՝ *«սկանապատումն սկսել»*, *«լիցքերն ամրացնել»*, *«հակազազը հագնել»*, *«կրակային դիրքը զբաղեցնել»*, *«զլխարկները հանել»*, *«վարժությունն սկսել»*, *«հնարքների ուսուցմանն անցնել»* և այլն:

Ռազմական ոլորտի լեզվում **անվանական անդեմ** նախադասությունները հիմնականում զինվորական հրամաններ ու կարգադրություններ են: Դրանց գերադաս անդամներն արտահայտված են գոյականի տարբեր հոլովներով, ածականներով (մակբայներով) և դերանուններով: Առավել հաճախ հանդիպող օրինակներն են՝ *«ավարտ»* (տրվում է վարժաձևի կամ այլ գործողության կատարումը դադարեցնելու համար), *«տազմնապ»* (տրվում է ստորաբաժանումը արագորեն մարտական պատրաստականության «բարձր» աստիճանի բերելու համար), *«գործիքին»* (տրվում է տարբեր վարժություններ կատարելիս՝ վարժասարքին կամ գործիքին մոտենալու և վարժությունը սկսելուն նախապատրաստվելու համար), *«տեղերում»* (նախապես նշված տեղերը զբաղեցնելու հրաման), *«ազա՛տ»* (կանգնել հանգիստ, թուլացնել աջ կամ ձախ ծունկը, չշարժվել, լինել ուշադիր), *«հավասար»*²¹ (բոլորը, բացի աջթևայինից, գլուխները շրջում են աջ և հավասարվում են այնպես, որ յուրաքանչյուր զինծառայող

²¹ *Հավասար*-ը, փաստորեն, *հավասար* ածականի հնչյունափոխական տարբերակն է, որում *ա* ձայնավորը պարզապես սղվել է:

տեսնի չորրորդի կուրծքը՝ հաշվարկը կատարելով իրենից սկսած), *«ինձ մոտ»* (մոտենալ հրաման տվող պետին), *«ին հետևից»* (այս հրամանով ստորաբաժանման անձնակազմը շարժվում է պետի հետևից):

Որպես անդեմ միակազմ նախադասությունների տեսակ քննելով **բառ-նախադասությունները՝** կարելի է փաստել, որ ռազմական ոլորտի լեզվին հատուկ չէ հայերենում տարածված բառ-նախադասություններից և ոչ մեկը: Փոխարենը ամենօրյա կիրառություն ունեն «այո» և «ոչ» պատասխանական բառերի զինվորական տարբերակները՝ համապատասխանաբար *«ծիշտ այրպեն»* և *«ոչ մի կերպ»* կապակցությունները:

Ռազմական ոլորտի լեզվի շարահյուսական իրողություններն ուսումնասիրելիս առանձին անդրադարձ է կատարվել *շարահյուսական կապակցության միջոցների ու եղանակների*, որովհետև տարբեր միջոցների ու եղանակների ուսումնասիրությունների ժամանակ ի հայտ են գալիս հետաքրքիր օրինաչափություններ: Ռազմական ոլորտի լեզվում ուրույն դեր է կատարում շարահյուսական կապակցության միջոցներից **շարադասությունը**, որի **քերականական** գործառույթի մասին խոսելիս հետաքրքիր է անդրադառնալ **աստիճանական հատկացուցիչներ** ունեցող կապակցություններին, որոնց անդամների շարադասությունը հնարավոր չէ փոփոխել²², օրինակ՝ *«գորամասի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ»*, *«գորամասի 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ հրաձգային վաշտի 1-ին հրաձգային դասակի հրամանատար»* և այլն: Շարադասության **ոճական** գործառույթին անդրադառնալիս վերլուծվել է **շրջուն շարադասությունը՝** որպես ռազմական ոլորտի լեզվի ոճական տիպիկ առանձնահատկություն: Այս հանգամանքը, կարելի է ասել, զինվորական խոսքի ամենաբնորոշ հատկություններից է, որով այն տարբերվում է այլ միջավայրերի լեզվական իրադրություններից: Օրինակ՝ քաղաքացիական կյանքում ասում են՝ *«Երեխաներ, շարվե՛ք ընթրիքի համար»*, զինվորական կյանքում՝ *«Վաշտ, առավոտյան ստուգման շարվիր»*, քաղաքացիական կյանքում՝ *«Երեխաներ, ընդունե՛ք նարմնամարզական կեցվածք»*, զինվորական կյանքում՝ *«Վաշտ, մարմնամարզական կեցվածք ընդունիր»* և այլն:

Ձինվորական խոսքում՝ հատկապես զորահրամաններում, կարևոր դերակատարություն ունի շարահյուսական կապակցության միջոցներից **հնչերանգը**: Քանի որ զինվորական խոսքում գերազանցապես միակազմ նախադասություններ են, հնչերանգի դերն ավելի է մեծանում: Յնչերանգն արտահայտվում է ձայնային ելևէջումներով և դադարով: Օրինակ՝ *«ավարտ», «օհ», «դադար»* հրամանները որպես հրաման չեն հասկացվի, եթե չասվեն համապատասխան հնչերանգով: Գիշտ ընկալվելու համար պետք է ընդգծված հրամայական հնչերանգով արտասանվեն հատկանիշ ցույց տվող բառերով կազմված հրամանները, օրինակ՝ *«ուղիղ»*,

²² Տե՛ս Ա. Պապոյան, Խ.Քաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 14:

«ազանտ», «հաճախաքայլ», «համաքայլ», «բարձր», «ֆուզասայիՆ», «հաճախաժիճ» և այլն: Ձիմվորական հրամաններում շատ է գործածվում արտասանական դադարը, որը դրվում է հրամանների նախնական և կատարողական մասերի միջև: Շարային վարժածները հաջողությամբ կատարելու համար հրամանատարը պետք է ճիշտ հնչեբանգով և ժամանակին տա հրամանը: Հատկապես բանավոր հրամաններում հրամանատարի սխալ հնչեբանգը հաճախ կարող է սխալ գործողության պատճառ դառնալ: Օրինակ՝ *«վազքով մարշ»* հրամանը տալիս եթե հրամանատարը ձգելով չարտասանի նախնական մասը, քայլող զինծառայողը անմիջապես տեղից կանցնի վազքի՝ չսպասելով կատարողական հրամանին: Մեկ այլ օրինակ: եթե քայլող զինծառայողին *«հետ դարձ»* հրամանը տալիս հրամանատարը անհրաժեշտ չափով *«չձգի»* նախնական հրամանը՝ ձախ ոտքը գետնին դնելու հետ մեկտեղ կատարողական հրամանը տալու համար, պարզապես հնարավոր չի լինի ճշգրիտ կատարել վարժությունը: Հնչեբանգի հետ սերտորեն առնչվում է նաև **տրամաբանական շեշտը**, որը փաստորեն նախադասության հնչեբանգի ամենաբարձր տոնն է. այն ունկնդրի ուշադրությունը բևեռում է խոսքի առանցքի՝ միջուկի վրա: Սովորական շարադասությունն ունեցող նախադասության տրամաբանական շեշտը սովորաբար դրվում է ստորոգյալի վրա, բայց եթե խոսողը ցանկանում է շեշտել, ընդգծել նախադասության ենթական կամ մեկ այլ անդամ, տրամաբանական շեշտի դիրքը փոխելու նպատակով կատարվում է շարադասության փոփոխություն: Օրինակ՝ *«Գնդի հրամանատարը գեկուցել է գենք-զինամթերքի բացակայության մասին չորս օր հետո»*, *«Գնդի հրամանատարն է գեկուցել գենք-զինամթերքի բացակայության մասին չորս օր հետո»* (ոչ թե գումարտակի հրամանատարը), *«Չորս օր հետո է գնդի հրամանատարը գեկուցել գենք-զինամթերքի բացակայության մասին»* (ոչ թե նույն օրը):

Հետաքրքիր դիտարկումներ են կատարված նաև **չարահյուսական կապակցության եղանակների**՝ մասնավորապես ենթակայի ու ստորոգյալի համաձայնության, ուժեղ և թույլ խնդրառությունների հետ կապված: Համաձայնության տեսակներից **բակառությունը**, որը, ըստ էության, սխալ, մերժելի ձև է, բավականին տարածված է ռազմական ոլորտի լեզվի գրավոր ու բանավոր խոսքում: Տարածված սխալ է նաև *զինված ուժեր* կապակցության հետ հոգնակի թվով ստորոգյալ դնելը: Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ *զինված ուժերը* Հայաստանի Հանրապետությունում մեկ ամբողջական պետական կառույց է, ինչպես որ Նիդեռլանդները մեկ պետություն է: Եթե խոսքը վերաբերում է գերատեսչությանը՝ զինված ուժերին, ստորոգյալը միշտ պետք է դնել եզակի թվով, օրինակ՝ *ՀՀ զինված ուժերը ստեղծվել է 1992 թվականին*:

Ռազմական ոլորտի լեզվում մեծ թիվ են կազմում ուժեղ խնդրառություն պահանջող բայերը, ինչպես՝ *ականազերծել, ականապատել, ավերել, գերեվարել, գնդակոծել, գրավել, զինել, գրավվել, զինվել, խոցվել, նորոգեցնել, պայթեցնել* և այլն: Թույլ խնդրառություն պահանջող բայերից են՝ *շարվել, բացազատվել, հերթապահել, դիրքավորվել, դարանակալել, ծավալվել, խուսավարել* և այլն:

Եզրակացություններ: Ռազմական ոլորտի լեզվի առանձնահատկություններն ուսումնասիրելիս հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

Ռազմական ոլորտի լեզվի բառապաշարի քննությունն ամբողջացնելով՝ կարելի է վստահաբար նշել, որ ռազմագիտական տերմինների ստեղծման գործընթացը լայն քայլերով առաջ է գնում: Օտար լեզուներից կատարվում են փոխառություններ, դրանք հայերեն համարժեքներով փոխարինելու համար ստեղծվում նոր բառեր՝ հարստացնելով հայոց լեզվի բառազանձը: Այնուամենայնիվ, ռազմական ոլորտի լեզվի բառապաշարի զարգացման արդի փուլը, որը սկիզբ է առել հայոց ազգային բանակի ստեղծումից հետո, դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Ոլորտում անելիքներն անսպառ են, և բացի բառաստեղծման ու թարգմանության գործընթացներից՝ հարկավոր է մշակել նաև դրանք զինվորական կազմին մատուցելու և ընդհանուր կիրառության դնելու մեխանիզմ: Քանի որ դեռ լիովին հստակ կանոնակարգված չէ ռազմական տերմիններն ու տերմինակապակցությունները կիրառության դնելու գործընթացը, զինվորական խոսքը անհրաժեշտ չափով հղկված չէ և պարունակում է բազմաթիվ օտարաբանություններ, ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ շատ ռազմական տերմիններ ու տերմինակապակցություններ կան չեն կիրառվում, կան կիրառվում են սխալ, երբեմն առանց իմաստը հասկանալու: Այս մասին են վկայում բառօգտագործման բազմաթիվ սխալները, որոնցից շատերը գործածվում են ոչ միայն բանավոր խոսքում, այլև գրավոր՝ հատկապես ծառայողական զեկուցագրերի, տեղեկանքների մեջ: Այս բոլոր խնդիրները հաջողությամբ լուծելու համար առավել արդյունավետ կլինի, որ ինչպես ցանկացած ոլորտի, այնպես էլ ռազմագիտական տերմինաշինությամբ զբաղվեն հայագետները, իհարկե, ոլորտի համապատասխան մասնագետների օժանդակությամբ:

Ձևաբանական իրողությունների վերաբերյալ կարելի է նշել, որ ռազմական ոլորտի լեզվում ոճական առավել արտահայտիչ դրսևորումներ ունեն գոյականի թվի, հոլովի քերականական կարգերը, ածականները, մակբայներն ու դերանունները՝ ավելի նվազ: Խոսքի մասերից գլխավոր դերակատարությունը բայինն է, որն իր քերականական կարգերի ու հատկանիշների հարստությամբ մեծապես բնորոշում է ռազմական ոլորտի լեզուն: Ոճական մեծ արտահայտչականություն ունեն բայի տարբեր եղանակները, ժամանակները, ինչպես նաև թվի, դեմքի քերականական կարգերը: Եվս մի ոճական յուրահատկություն է խոսքի մասերի փոխանցումը, որի տեսակներից ռազմական ոլորտի լեզվում լայն գործածություն ունի փոխանունությունը՝ պայմանավորված զինվորական հաղորդակցային իրադրություններում հակիրճության ու սեղմության պահանջով: Գրավոր ու բանավոր խոսքում լայնորեն կիրառվում են թե՛ «որոշիչ + որոշյալ» կապակցությունների և թե՛ սեռական-տրական հոլովածների փոխանունները:

Ճիշտ է՝ ռազմական ոլորտի լեզվում բառակապակցությունները ոճական մեծ արտահայտչականություն չունեն, սակայն պետք է փաստել, որ կայուն ոչ վերա-

իմաստավորված գոյականական բառակապակցությունները մեծ թիվ են կազմում, որոնց թվում են կառուցվածքային ստորաբաժանումների անվանումներ, զինվորական կոչումներ, տարբեր հասկացություններ: Ռազմական ոլորտի լեզվի շարահյուսական քննության հիմնական միավորը նախադասությունն է՝ իր իմաստային, կառուցվածքային տարատեսակներով, զինվորական խոսքում դրանց ոճական-արտահայտչական կիրառություններով ու դերով: Ռազմական ոլորտի լեզվին հատուկ են հակիրճ, դիպուկ ու հստակ հրամանների օգտագործումը, ուստի առավել գործածական են միակազմ նախադասությունները, որոնք, իսկապես, ոճական առումով բնորոշ են զինվորական հաղորդակցային իրադրությանը: Ձինվորական հրամանների թվում շատ են և՛ դիմավոր միակազմ նախադասությունները, և՛ անդեն:

Ռազմական ոլորտի լեզվում շարահյուսական կապակցության միջոցներից ուրույն դեր է կատարում շարադասությունը: Բնորոշ հատկանիշ է պաշտոն, կոչում, ազգանուն հաջորդականության ժամանակ առաջացող բացահայտիչ-բացահայտյալ կառույցի կայուն բնույթը: Ռազմական ոլորտի լեզուն շրջում շարադասության ոճական առանձնահատկության տիպիկ օրինակ է: Այս հանգամանքը զինվորական խոսքի ամենաբնորոշ հատկություններից է, որով այն տարբերվում է այլ միջավայրերի լեզվական իրադրություններից: Յետաքրքիր ոճական դրսևորումներ ունեն նաև հնչերանգը՝ արտասանական դադարներով, տրամաբանական շեշտով, որը շատ դեպքերում իմաստային առումով որոշիչ է լինում, շարահյուսական կապակցության եղանակները՝ համաձայնությունը, խնդրառությունը՝ իր ուժեղ և թույլ տեսակներով:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Հայերենի ռազմագիտական տերմինաշինության որոշ սկզբունքներ, «Հայկական բանակ», թիվ 4 (66), Եր., 2010, էջ 123-126:

2. Ռազմական ոլորտի լեզվում շարահյուսական մի քանի հարցեր, «Օրինետալիս», թիվ 15, Եր., 2013, էջ 90-97:

3. Հաճախ հանդիպող բառագործածության ու քերականական սխալները ռազմական ոլորտի լեզվում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 3-4, Եր., 2013, էջ 64-67:

Хачатрян Левон Жирайрович
Лингвистические особенности языка военной сферы
в армянском языке

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 – “Армянский язык”.

Защита состоится 21.03.2014г., в 15:00, на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК при Институте языка им. Гр. Ачаряна Национальной академии наук РА (по адресу: 0015, Ереван, ул. Гр. Лусаворича 15).

РЕЗЮМЕ

В условиях отсутствия армянской государственности и армии на протяжении 700 лет язык военной сферы развивался медленно, а объемные аналитические научные работы на эту тему и вовсе не были написаны, несмотря на очевидную важность. Было издано только несколько военных словарей.

Изложенная работа первая в армяноведении, направленная на лексический и грамматический анализ реалий военного языка и военной терминологии.

Целью диссертации является исследование языка военной сферы, выявление закономерностей ее развития в различных исторических периодах, анализ лингвистических особенностей, характерных военному слову.

Работа состоит из введения, двух глав с подразделами, заключения и списка использованной литературы.

Во введении представлены закономерности развития языка военной сферы в различных исторических периодах, приведено научное обоснование важности и актуальности исследуемой темы.

В первой главе - “Лексика военной сферы” - в первую очередь были изучены лексические слои с акцентом на неологизмы, архаизмы, заимствованные слова, иностранные термины, омонимы, часто встречающиеся ошибки перевода и использования их в речи. Затем сделан анализ словообразования с акцентом на более действенные формы и аббревиатуры.

Вторая глава названа “Грамматические реалии языка военной сферы”. В подразделе **“Морфологические реалии”** представлены стилистические особенности частей речи и их грамматических категорий в военной терминологии. В подразделе **“Синтаксические реалии”** изучено выраженность синтаксических грамматических категорий и элементов военного языка.

В ходе исследования особенностей военного языка сделаны следующие выводы.

Формирование военных терминов развивается быстрыми шагами. Активно используются заимствования, для замены которых на армянском языке создаются новые слова, тем самым обогащая лексический запас армянского языка. Тем не менее современная стадия развития военной терминологии, которая берет свое начало со дня формирования армянской армии, должна пройти долгий путь. В нынешней стадии задачи неисчерпаны, и помимо процессов словообразования и перевода необходимо разработать механизм подачи военных терминов личному составу, их внедрения и общего применения.

В военной терминологии стилистически более ярко выражены грамматические категории числа и падежа существительных, относительно меньше - прилагательные, наречия и местоимения. Из частей речи ведущую роль играет глагол. Большую стилистическую выразительность имеют грамматические категории разных наклонений и времен, а также числа и лица глагола. Еще одной стилистической особенностью является передача частей речи, а ее разновидность – метонимия – имеет наибольшую выраженность в военной терминологии, что обусловлено необходимостью коротко и лаконично излагать мысли в реалии военного общения.

Словосочитания в военной терминологии не имеют особую выразительность, но стабильные непереосмысленные субстантивные словосочитания составляют большое число, в которое входят наименования структурных подразделений, военные звания, различные военные понятия.

Основной единицей синтаксического анализа военного языка является предложение, а наиболее характерным для общения в военной сфере является использование односоставного предложения. В текстах военных приказов часто встречаются как личные односоставные предложения, так и безличные.

В военной лексике особую роль играет построение предложения, как один из способов синтаксического сочетания. Интересно выражены также обертоны с выразительными паузами, логическим ударением, способы синтаксических сочитаний – соглашения, управление – со своими сильными и слабыми видами.

Levon Jhirayr Khachatryan

The Features of the Military Language in Armenian

Dissertations on Candidate's degree in Philological Sciences on the Specialization 10.02.01 – The Armenian Language

The defense will be held at the Address: 0015, Yerevan, Grigor Lusavorich Street 15, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences, at the session of Specialized Council of Linguistics 019 HAC, at 15:00, 21.03.2014.

Summary

As a consequence of 700-year absence of Armenian statehood and lack of a regular army, the military language has developed at a slow pace. In spite of their great importance, extensive analytical work studies on military language had never been published before. Only a number of military dictionaries have been published. The thesis is the first attempt in Armenology to make analysis on the vocabulary and grammatical concepts of the military language.

The aim of the thesis is to study the military language, its development regularities in different time periods, to reveal the linguostylistic features that identify the military speech. The thesis is comprised of introduction, two chapters with their subsequent subchapters, conclusions and bibliography.

The introduction presents the development regularities of the military language in different time periods; it proves the significance and the actuality of the given topic.

The first chapter is titled “The Vocabulary of the Military Realm”. Firstly, the layers of the vocabulary have been examined, especially neologisms, archaisms, loanwords, foreign words, calques, homonyms, paronyms, common word-use and false friends of translation. Secondly, compositional examination was carried, separating the most functioning word templates, the abbreviations were also addressed.

The second chapter is entitled “The Grammatical Concepts of the Military Language”. In the subchapter “Morphological Concepts” are presented the

parts of speech, the stylistic features of their grammatical order in the military language. *The subchapter* “Syntactic Concepts” paragraph examines the expressiveness of the syntactic grammatical orders and elements of the military language.

Following conclusions have been made, while analyzing the features of the military language.

The process of the creation of military terms is developing at a rapid pace. Loanwords are being borrowed from foreign languages; new words are being created in order to change the loanwords into Armenian to enrich the vocabulary of the Armenian language. However, the current stage of development of the military language vocabulary, which started after the formation of the Armenian national army, has a long way to go. There are countless things to do in that field: besides the word-creation and translation processes, it is also necessary to present them to the military committee and develop a mechanism to put them to general application.

In the military language, the following parts of speech have more significant stylistic expressiveness: noun, grammatical orders of case, adjectives, adverbs and pronouns (less). Among the parts of speech, the verb has the most important role. The different verb forms, tenses, as well as grammatical orders of noun and person have great stylistic expressiveness.

Another stylistic characteristic is the transfer of the parts of speech. Metonymy, among other types, has an active usage in the military language due to the necessity of brevity and curtness in military conversational situations.

In the military language, word-links do not have great stylistic expressiveness, yet there are quite many stable non-reviewed noun word-links, like structural units names, military ranks, and different other concepts.

Sentence is the main unit of the syntactic examination of the military language, and stylistically it is more typical to the military language to use simple short sentences. In the military commands, there are a number of both simple personal and simple impersonal sentences.

From the means of syntactic link, the syntax plays a unique role in the military language. Also, quite an interesting stylistic expression have intonation

with its declamatory pauses and logical stress, syntactic links modes such as consent, direct and indirect objects with their strong and weak forms.